ԹԵՂԵՆՅԱՑ ՎԱՆՔԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

(1979—1989 թթ. արդյունքները)

Գ. Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

Միջնադարյան Հայաստանի առավել աչքի ընկած կրոնամշակութային օջախներից մեկն է եղել Թեղենյաց վանքը։ Այն գտնվում է Հայկական ԽՍՀ Նաիրիի շրջանի Բուժական գյուղից 3 կմ հյուսիս, անտառածածկ տարածքում։ Վանքի մասին գրավոր հիշատակություններ մեզ են հասել VIII դարի 20-ական թթ.՝ կապված Վահան Գողթնեցու այստեղ այցելելու փաստի հետ։ Վանական կենտրոնի գործունեության արգասավոր ժամանակաշրջանը պետք է համարել XI—XIII դդ.։ Այս շրջանում են կառուցվել տեղի շինությունների մեծ մասը, ընդօրինակվել բազմաթիվ ձեռագիր մատյաններ։ Հուշարձանախմբի շինությունների որմերին, խաչքարերի և տապանաքարերի վրա պահպանվել են չորս տասնյակից ավելի վիմագիր արձանագրություններ, որոնք մեծապես լրացնում են վանքի վերաբերյալ մատենագրական տեղեկությունները։ Այդ քարեղեն վկայագրերի շնորհիվ է, որ ճշտվում է գավթի կառուցման ժամանակը և շինարարությանն օժանդակողի ինքնությունը, փաստվում են Վաչուտյան իշխանուհի Մամախաթունի, մեծանուն ճարտարապետ Վեցիկի և այլոց վանքին կատարած նվիրատվությունները, հայտնի են դառնում վանական միաբանության մի շարք ներկայացուցիչների անուններ։

Հուշարձանի տարածքում պեղման աշխատանքները սկսվել են 1979 թ.։ Այդ ընթացքում բացվել են մի շարք շինություններ, որոնք մինչ այդ, մասամբ կամ լիովին, հողի և փլատակների տակ էին։

Հուշարձանախումբը բաղկացած է նախկինում հայտնի և պեղումների շնորհիվ բացված վեց շինություններից[1]։ Դրանք են. Կաթողիկե եկեղեցին, գավիթը, նրան հյուսիսից հարող կառույցը, փոքր եկեղեցին, սեղանատունը, գրչատունը (նկ. 1)։

Այս հոդվածում չենք անդրադառնում վանքի պատմության մանրամասներին և մինչև պեղումները հայտնի հուշարձաններին (գավիթ, սեղանատուն), այլ կխոսենք միայն նորահայտ կառույցների՝ գավթին հյուսիսից հարող շինության, Կաթողիկե եկեղեցու, գրչատան, փոքր եկեղեցու, ինչպես նաև հնագիտական ու վիմագրական գտածոների մասին։

* * *

1979—1980 թթ. պեղումների ընթացքում բացվեց գրատուն-գրչատուն, որը կցված է Կաթողիկե եկեղեցու հարավային պատին։ Շինությունն իրենից ներկայացնում է ուղղանկյուն սրահ, որն, ամենայն հավանականությամբ, ունեցել է թաղակապ երկլանջ ծածկ։ Վերջինս հենվել է երեք զույգ որմնամույթերի վրա հանգչող կամարներին։ Սրահի ներսը բաժանված է երեք հատվածի։ Արևելյանը հյուսիս-հարավ ձգվող պատով առանձնացված է։ Այստեղ բացվեցին երեք նեղ, երկարավուն խուցեր, որոնք արևելյան կողմից ունեն կիսակլոր խորաններ։ Հյուսիսից առաջին խուցի և կաթողիկեի հարավային պատի միջև, ուղիղ եկեղեցու հարավային ավանդատան կողքին, գոյություն ունի ևս մի խուց, որն իր չափերով նման է նախորդներին, բացակայում է միայն խորանը։ Դատելով այս խուցի հարավային պատի վրա պարզորոշ

---

1 Բացառված չէ, որ հետագա պեղումների ընթացքում ի հայտ կգան նոր շինություններ։

երևացող աստիճանաշարի ագուցման փոսորակների առկայությունից, այն ծառայել է հենց այդ քարե աստիճանի տեղադրման համար։ Առայժմ դժվարանում ենք որոշակի կարծիք հայտնել այդ աստիճանի կիրառական նշանակության մասին. կարծում ենք, այստեղ ենթադրելի է երկու վարկած. ա) այդ աստիճանով մուտք են գործել եկեղեցու հարավային ավանդատան երկրորդ հարկախուցը, բ) գրչատունը կամ թերևս նրա արևելյան հատվածը եղել է երկհարկանի և երկրորդ հարկ բարձրացել են հենց այդ աստիճանով։ Այս



Նկ. 1

կապակցությամբ ավելորդ չէ նշել մի հանգամանք. եկեղեցու հարավային և գրչատան արևելյան պատերի հատման անկյունում, արտաքուստ, կառուցված է մի հարթակ, որի մակերեսը որոշակիորեն համընկնում է աստիճանի վերին քարին։ Չենք բացառում այդ հարթակի օգտագործումը որպես միջհարկային աստիճանավանդակի։ Կարծում ենք, որ վերոհիշյալ երեք խուցերն արևելյան կողմից ունեցել են պատուհաններ։

Կենտրոնական խուցի ուղիղ դիմաց բացվում է կողային երկրաչափական գեղաքանդակ հարդարմամբ մուտքը, որի կիսակլոր բարավորի քարը, եղծված արձանագրությամբ, հայտնաբերվեց պեղումների ընթացքում։

Գրչատան հարավ-արևմտյան անկյունը ներառնված է քառակուսի սենյակի մեջ, որի մուտքը արևելյան կողմից է։

Շինության քանդակազարդումը և հայտնաբերված բեկորները աչքի են ընկնում կատարման մեծ վարպետությամբ, պարզ ու յուրօրինակ հորինվածքով։ Հատկապես նշելի է հյուսիսային որմնամույթերից մեկի վրա դրված քառակուսի խոյակը։ Քանդակազարդումն իրականացված է խաչաձև դասավորված գլանների ձևով, որոնց ծայրամասերը իրենցից ներկայացնում են տարբեր նկարագիր ունեցող վարդյակներ։ Խոյակների նման հորինվածքը, ավելի պարզեցված, միաշերտ կամ եռաշերտ գլաններով, վարդյակների ամենատարբեր հարդարմամբ, սկզբնավորվում է դեռևս վաղ միջնադարից (Պտղնի, Զվարթնոց, Իշխան, Արուճ և այլն) և առավել լայն տարածում ստանում X—XI դդ. (Բյուրականի Ս. Հովհաննես, Բջնիի Ս. Աստվածածին, ժամանակամերձ այլ եկեղեցիներ)։

Գրչատունն ունի երեք մուտք։ Գլխավոր մուտքը հարավային կողմից է, արտաքուստ եզերված կողային կիսասյուներով։ Պահպանվել է բարավորի կիսաշրջանաձև քարը։ Մյուս մուտքը հյուսիսային կողմից է, որով գրչատունը հաղորդակցվել է Կաթողիկե եկեղեցու հետ։ Երրորդը բացված է արևմտյան պատի մեջ, որտեղից մուտք են գործում գավիթ։ Ի տարբերություն նախորդների, այս մուտքը բացվել է ավելի ուշ՝ գավթի կառուցման ժամանակ (XIII դարի առաջին տասնամյակ)։

Գրչատան հատակագծային հորինվածքը, շինարարության տեխնիկան, քարաշարի կառուցվածքային ընդծված տարբերությունները վկայում են կառույցի տարաժամանակյա շինարարության մասին։ Կարծում ենք, որ այն սկզբնապես ունեցել է ուղղանկյուն սրահի տեսք, առանց ներքին բաժանումների, ծառայել է, թերևս, որպես մատենադարան կամ ժողովարան։ Հետագայում, ամենայն հավանականությամբ գավթի շինարարության ժամանակ, իրականացվել են ներքին բաժանումները։

Գրչատունը կցվել է Կաթողիկե եկեղեցուն, ինչի մասին է վկայում եկեղեցու հարավային երկաստիճան հիմնաշարի առկայությունը և գրչատան հյուսիսային որմնամույթերից մեկի շաղախի՝ մեջ երևացող մուտքի կողային կիսասյունը։ Այս կցումը, մեր կարծիքով, իրականացվել է եկեղեցու կառուցումից մի քանի տասնամյակ անց՝ XI դարի երկրորդ կեսին։ Այդ թվագրման օգտին են վկայում գրչատան նախնական կառույցի շինարարական ոճը և քանդակազարդումը։

Գրչատան հատակը, որը 40 սմ ցածր է եկեղեցու և գավթի հատակից, սալվսծ է տուֆի սրբատաշ քարերով։ Սալաքարերի մի մասը փլվածքների հետևանքով կոտրատվել են։

Հյուսիսային կողմից գավթին հարում է մի շինություն, որն իր ճարտարապետական հորինվածքով և նույնիսկ չափերով պատճենում է կից գավիթը։ Ճարտարապետական և կիրառական ամենաբնորոշ տարբերությունը արևելյան կողմից եկեղեցու բացակայությունն է[2]։

Շինության պատերը ներսից շարված են բազալտի կոպտատաշ քարերով, բացառությամբ արևելյանի կենտրոնական հատվածի։ Ջենք կասկածում, որ նման շարվածք ունի նաև պատերի արտաքին մակերեսը, չնայած արտաքուստ կառույցը դեռևս չի բացվել։ Պատերի հարդարման այս ձևը առկա է նաև վանքի XIII դարով թվագրվող սեղանատանը։ Արևելյան պատի կենտրոնական միջորմնասյունային հատվածը ներքուստ շարված է սև տուֆի սրբատաշ քարերով։ Պատի վրա, հատակից 1,05 սմ բարձրության վրա

2 Չնայած դեռևս չի պեղված շինության արևելյան կողմը, բայց այդ պատի կենտրոնական հատվածում մուտքի բացակայությունը արդեն պարզորոշ վկայում է եկեղեցու չգոյության մասին։

ստեղծված է 37 սմ լայնությամբ և 3,70 սմ երկարությամբ հարթակ։ Պատի կենտրոնում ագուցված է գեղաքանդակ, ցավոք եղծված, խաչքար, որի միայն ստորին կեսն է պահպանվել։

Կառույցի չորս կենտրոնական սյուներից կանգուն են երեքը, որոնցից արևելյան երկուսի վրա պահպանվել են խոյակները։ Մյուս խոյակները և չորրորդ սյունը տապալված են. իր տեղում է վերջինիս խարիսխը։

Շինության հատակն ամբողջովին սվաղված է։ Պատերին եղել են կլոր բացվածք ունեցող պատուհաններ, որոնցից մեկը, քանդակազարդ շրջանաձև եզրագոտիով, կոտրտված վիճակում, գտնվեց պեղումների ժամանակ։ Կառույցի ներսից հայտնաբերված և պատերի մեջ հետագայում շարված քանդակազարդ բազմաթիվ քարեր վկայում են, որ այն ունեցել է բարձրարվեստ հարդարում։ Ներկա վիճակում (ներսակողմը պեղելուց հետո) շինության ոչ մի պատի վրա չեն երևում մուտքի հետքեր։ Մուտքի առկայությունը հյուսիսային և հարավային պատերին բացառվում է, քանզի հյուսիսային կողմից պատը համարյա դեմ է առնում սարալանջին, հարավից գավթի հյուսիսային պատն է, որն ամբողջովին պահպանվել է։ Միակ պատը, որի կենտրոնում կարող էր բացված լինել մուտքը, արևմտյանն է, որի ներկա շարվածքը ուշ շրջանի է, օգտագործված են (պատահական դասավորությամբ) սրբատաշ և քանդակազարդ քարեր։ Չենք բացառում մուտքի գոյությունը արևելյան պատին՝ հարավ-արևելյան և անկյունային որմնասյուների միջև։ Մուտքի առկայությունը պատի ոչ կենտրոնական հատվածում քանիցս փաստված է հայկական գավիթներում։

Շինությունը ուշ շրջանում վերաշինման ենթարկելու և կիրառական այլ նշանակություն (տնտեսական) ձեռք բերելու մասին են վկայում հարավարևմտյան անկյունում բացված, բավական լավ պահպանված թոնիրը, ինչպես նաև տնտեսության մեջ օգտագործվող մի շարք գործիքների ու առարկաների գտածոները։

Արդ. սկզբնապես ի՞նչ կիրառություն է ունեցել այս շինությունը։ Հայկական գավիթներին բնորոշ առանձնահատկություններից էին նպատակային ծառայությունը, օգտագործումը որպես ժողովասրահ, զուգահեռ՝ նաև տապանատուն և անպայմանորեն արևելյան կողմից եկեղեցու առկայությունը։

Միջնադարյան վանական շինությունների մեջ հանդիպում են տարբեր ճարտարապետական հորինվածք ունեցող կառույցներ, որոնք հենվելով մատենագրական ու վիմագրական վկայությունների վրա, մասնագետների կողմից բնորոշվում են որպես մատենադարան, գրչատուն, նշխարատուն, ճեմարան և այլն։ Դրանք այն շինություններն են, որոնք իրենց ճարտարապետական առանձնահատկություններով ծիսական պահանջները բավարարել չեն կարող։ Թվում է, Թեղենյաց վանքում մենք առնչվում ենք նման երևույթի հետ, չնայած, ինչպես նշվեց, շինությունը իր հորինվածքով խիստ նման է հայկական գավիթների տիպին։ Մենք հակված ենք ենթադրելու, որ վանքի այս շինությունը ծառայել է որպես մատենադարան կամ ինչպես միջնադարում էին կոչում՝ նշխարատուն։ Ինչ վերաբերում է թվագրմանը, կարծում ենք, որ շինարարությունն իրականացվել է անպայմանորեն դավթից հետո, թերևս XIII դարի երկրորդ կեսին կամ նույնիսկ 20—50-ական թթ.։

Թեղենյաց վանքի վաղագույն հիշատակությունը, ինչպես նշեցինք, վերաբերում է VIII դարի 20-ական թթ., ինչը թույլ է տալիս ենթադրելու, որ այն հիմնվել է ավելի վաղ, առնվազն VII դարում։ Վերջին տարիների պեղումները եկան հաստատելու այս ենթադրությունը։

1986—1989 թթ. հնագիտական ուսումնասիրությունների ընթացքում, հիմնական հուշարձանախմբից մոտ 30 մ դեպի արևելք, ոչ հաստ հողաշերտի տակ հայտնաբերվեցին փոքր չափերի շինության հիմքեր, որոնք իրենց հատակագծային հորինվածքով հիշեցնում են վաղ միջնադարից հայտնի քառախորան եկեղեցիների տիպը։ Գմբեթատակ քառակուսու չորս կողմերում կիսակլոր հենախորշերն են։ Պահպանված պատերը ներքուստ ունեն 10—50 սմ բարձրություն։ Պատերի արտաքին քարաշարը թափված է։ Խաչաթևերի

միացման անկյունները պարզ ու միագիծ են, ինչով պայմանավորվում է թմբուկի հիմքը կրող կամարների միացումը։ Պեղումներից գտնվեց այդ հանգույցի ճյուղավորման սկզբնահատվածի երկու քար, որոնք վառական նշանակություն կարող են ունենալ գմբեթակիր կամարների, նաև գմբեթարդի կառուցվածքային պատկերն ստանալու համար։

Ինչպես խաչաթևերի, այնպես էլ ենթագմբեթային կենտրոնի հատակը սալապատված է տուֆի սրբատաշ քարերով։ Դրանք չեն պահպանվել արևմտյան խաչաթևում, որտեղ եղել է մուտքը։ Ընդհանրապես այդ խաչաթևը վատ է պահպանված, առկա են միայն անկյունների քարերը։

Շինության արտաքին շրջագծային պատկերը որոշակիորեն ուրվագծվում է պահպանված ցոկոլային հիմնաշարի շնորհիվ։ Խաչաթևերն արտաքուստ ներառնված են յոթանիստ հորինվածքի մեջ, իսկ արևմտյանը՝ ուղղանկյուն։ Հիմնաշարը կառույցի տարբեր հատվածներում ունի տարբեր մշակում։ Իր հարդարանքով ու հղկվածությամբ զատորոշվում է արևմտյան ուղղանկյունը։ Յոթանիստ հորինվածքի և արևմտյան ուղղանկյուն սրահի շինարվեստի այս ընդգծված տարբերությունը վկայում է վերջինիս ավելի ուշ կառուցման մասին։

Եկեղեցու հարավային կողմում, կցված, պահպանվել են բավական անորոշ հորինվածքի շինության մնացորդներ, որոնք լիովին ձևափոխել են կառույցի հարավային նիստերի արտաքին նկարագիրը։

Պեղումների ժամանակ հայտնաբերվեցին կրաշաղախով պատված բազմաթիվ սրբատաշ շինաքարեր և ճարտարապետական մանրամասներ։ Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում մոտավորապես եռանկյուն (վերին անկյունը կտրված) կառուցվածքի բարավորի քարը, հարդարված ռելիեֆ խաչանշաններով և արձանագրությամբ։ Ամենայն հավանականությամբ, այս քարը դրված է եղել ուղղանկյուն խաչաթևի արևմտյան մուտքի վերնամասում։ Եվս մի բարավորի քար, այս անգամ ուղղանկյուն, գտնվեց եկեղեցուց սոտ 10 մ հեռավորության վրա։ Քարի կենտրոնական քառակուսին հարդարված է վաղ շրջանին բնորոշ բուսական ռելիեֆ քանդակներով։ Կարծում ենք, որ այն պատկանել է վաղագույն ութանիստ եկեղեցուն։ Այն իրողությունը, որ եկեղեցու տանիքը եղել է քարածածկ, վկայում են լավ մշակված ծածկասալերի բեկորները։

Եկեղեցու հարևանությամբ, հյուսիսային կողմում, հայտնաբերվեց սև տուֆից կերտված ամբողջական խաչքար (չափերը՝ 155×70×22 սմ)։ Այն մեծ հետաքրքրություն է ներկայացնում և ցայժմ հայտնի եզակի նմուշ է։ Խաչքարն աչքի է ընկնում ոչ այնքան իր զարդամոտիվներով, որքան իր վիճակով։ Այստեղ մենք գործ ունենք խաչքարի կիսապատրաստուկի հետ։ Քարգործ վարպետը գծագրել է քարի մակերեսը, սակայն ինչ-ինչ պատճառով չի քանդակել։ Խաչքարի այսօրինակ նմուշը կարևոր փաստ է այդ կոթողների կերտման ձևերն ու օրինաչափություններն ուսումնասիրելու համար։ Խաչքարի զարդամոտիվները բնորոշ են XIII դարին։

Եկեղեցու հյուսիսային կողմում գտնվեցին մեկ այլ գեղաքանդակ խաչքարի տասնյակ մանր բեկորներ։ Դատելով այս բեկորների քանդակներից, կոթողը կարելի է դասել խաչքարային արվեստի լավագույն նմուշների թվին։

Պեղավայրի այս հատվածում հայտնաբերվեցին հասարակ և ջնարակած խեցեղենի բազմաթիվ բեկորներ, արձանագրությունների մնացորդներ և արևի ժամացույցի պատկերմամբ մի քար։

Վերը նկարագրված կառուցվածքով եկեղեցիները որոշակի տարածում են ունեցել վաղ միջնադարում՝ Ջրառատի Ս. Մինաս (նախակերպը), Ալամանի Ս. Անանիա, Զադավանի եռախորան[3]։

Մի քանի խոսք կառույցի բնույթի մասին։ Ինչպես նշվում է մասնագիտական հրատարակություններում, վաղ շրջանի (V—VII դդ.) այս փոքր կա-

---

3 Վ. Գ. Գրիգորյան. Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձանները. Երևան, 1982, էջ 129, տախտակ V (7, 8, 9)։

ոուլցները եղել են բազմաբնույթ. աղոթարան կամ սրբարան, վկայարան մատուռ, մկրտարան, գերեզմանատան եկեղեցի կամ տոհմական դամբարան-եկեղեցի և այլն[4]։ Նկատի ունենալով այն փաստը, որ կառույցի անմիջական հարևանությամբ, պեղումների շնորհիվ բացվել են երկու տապանաքար (ուղղանկյուն), կարելի է Թեղենյաց վանքի այս շինությունը որակել որպես գերեզմանատան եկեղեցի կամ մատուռ։

Կարծում ենք, որ այս եկեղեցին կարելի է թվագրել VI—VII դդ.։

Կաթողիկե եկեղեցին գտնվում է հուշարձանախմբի կենտրոնում, ամբողջովին բացվել է պեղումների շնորհիվ։ Եկեղեցին քանիցս հիշատակված է Թեղենյաց վանքին վերաբերող մատենագիր և վիմագիր աղբյուրներում։

Ճարտարապետական հորինվածքով եկեղեցին պատկանում է զույգ որմնամույթերով գմբեթասրահների տիպին, որոնք սկզբնավորվելով XI դարում, մեծ տարածում են ստանում հաջորդ երկու հարյուրամյակներում։ Եկեղեցու արտաքին չափերն են՝ 10,5×15 մ։ Շինության պատերը (բացառությամբ արևմտյանի) բարձրանում են եռաստիճան հիմնաշարի վրա։ Պատերի բարձրությունը, որոշ հատվածներում, հասնում է 2,5 մ։

Ճարտարապետական գրականության մեջ հատակագծային նմանօրինակ հորինվածքները գիտվում են որպես IX դարում Սյունիքում սկզբնավորված և Այրարատի դպրոցում կատարելագործված երկու զույգ որմնամույթերով եկեղեցիների (Հոռոմոսի Ս. Մինաս, Նորատուս, Շիրակավան և այլն) զարգացման նոր փուլ, երբ արևելյան գմբեթակիր որմնամույթերը շինության ծավալային փոփոխություններին (ինտերիերի պարզեցում և փոքրացում) համընթաց, աստիճանաբար ձուլվում են արևելյան խորանի երկու ծայրերին։ Այս երևույթի տիպիկ դրսևորումներից մեկն է արևմտյան զույգ որմնամույթերի և խորանի անկյունների ճարտարապետական հարդարանքի ընդհանրությունը։

Թեղենյաց վանքի նորահայտ եկեղեցուն ճարտարապետական կառուցվածքով համահնչյուն են Բշնիի Ս. Աստվածածին (1031 թ.), Հոռոմոսի Ս. Հովհաննես (1038 թ.), Գոշավանքի Ս. Աստվածածին (1191—1196 թթ.) և Ս. Գրիգոր (1231 թ.) և այլ եկեղեցիներ։

Եկեղեցու խորանի երկու կողմերում ավանդատներն են։ Սույն տիպի կառույցների ավանդատները երբեմն եղել են կրկնահարկ և չի բացառվում, որ մեր եկեղեցում նույնպես այդպես եղած լինի։ Երկրորդ հարկ բարձրացել են խորանի միջից, անկյունային եռանիստ կիսասյուների ետևում շարված աստիճաններով։ Այս օրինակում պահպանվել են միայն ոչ խորը ուղղանկյուն խորշեր (միայն ստորին հատվածը) և դժվար է որոշել, այդտեղ եղե՞լ են աստիճաններ, թե ոչ։ Ինչպես նշում է Ն. Տոկարսկին, այդ խորշերը նմանօրինակ կառույցների նախատիպում առկա առանձնացված արևելյան որմնամույթերի և ավանդատան մուտքի միջև եղած միջանցքի հիշողությունն են[5]։

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում ավանդատների հատակագծային հորինվածքը։ Հատակագծով դրանք ունեն երկրաչափական սեղանի ձև՝ մուտքի մոտ լայնությունը 160 սմ է, արևելյան կողմում (բեմի հատվածը)՝ 180 սմ։ Նպատակը արևելյան խորանի կիսաբոլորից առաջացած արևելյան պատի ստվարության թեթևացումն է։

Եկեղեցին ունի երկու մուտք։ Գլխավոր մուտքը եղել է հարավային կողմում։ Այժմ այն բացվում է գրատան մեջ։ Արտաքուստ այս մուտքի կողերը հարդարված են եղել պարզ կիսասյուներով։ Բավական ճոխ է հարդարված դեպի գավիթ բացվող մուտքի արևմտահայաց երեսը, այն ունի ուղղանկյուն բացվածք և եզերված է երկրաչափական քանդակազարդում ունեցող բազմաշերտ գոտիով։

Պեղումների ժամանակ հայտնաբերվեցին եկեղեցու որմնամույթերի խոյակների բեկորներ, որոնցով կարելի է դատել դրանց ձևի ու քանդակազարդ-

---

4 Նույն տեղում, էջ 50։

5 Н. М. Токарский. Архитектура Армении (V—XIV вв.). Ереван, 1961, с. 226.

ման մասին։ Այդ խոյակներն իրենցից ներկայացրել են երեք շարքով իրար վրա դրված գլաններ, որոնց կտրվածքները հարդարված են պարզագույն վարդյակներով։ Այսօրինակ խոյակների նմանության աղերսներ են դիտվում Բշնիի Մ. Աստվածածին, Անիի Գագկաշեն եկեղեցիներում։

Եկեղեցու արեելյան պատի վրա արտաքուստ եղել է եռանկյուն կտրվածքով երկու խորշ։ Այդպիսիք դիտվում են նաև հյուսիսային և հարավային պատերի վրա, մեկական, ուղիղ որմնամույթերի ետևում։ Հյուսիսային պատի պահպանված միակ խորշից դատելով դրանք կենտրոնում ունեցել են կիսասյուներ։

Հուշարձանի ճարտարապետական գտածոների մեջ աչքի են ընկնում առագաստ կազմող կաթիլաձև քարերը (5 հատ, ամբողջական և կոտրված), թմբուկի քիվի երկու քար, պատուհանների պսակներ և կողային նուրբ մշակմամբ կիսասյուներ, առաստաղի ճոխ քանդակազարդված երեք քար։ Վերջիններիս տեղը որոշելու հարցում կարևոր զուգահեռ կարող է հանդիսանալ նմանօրինակ քարերի առկայությունը Գանձասարի գավթի առաստաղի վրա։ Թեղենյաց վանքի Կաթողիկե եկեղեցում այս քարերը, հավանաբար, տեղադրված են եղել ներքին կամարների կենտրոնում։ Այսօրինակ պատկեր առկա է նաև գավթում։

Եկեղեցին սալահատակված է տուֆի սրբատաշ քարերով, որոնք շարվել են սկզբնական սալահատակի վրա, ինչը վկայում է հուշարձանում իրականացված նորոգչական աշխատանքների մասին։

Կաթողիկե եկեղեցու ամենաուշագրավ հատվածը բեմի ճակատային մասն է։ Այն բաղկացած է վեց քառակուսի և ուղղանկյուն քարերից, որոնց բարձրությունը 90 սմ է, հաստությունը՝ 25 սմ (աղ. I)։ Վերևում ձգվել է 35 սմ հաստությամբ, պարզ հարդարանքով քիվը։ Ճակատամասի երկարությունը 550 սմ է։ Նշված քարերի ամբողջ մակերեսը քանդակազարդված է երկրաչափական, կենդանական և բուսական մոտիվներով։

Կենտրոնական քարին քանդակված է սիրամարգ՝ բացված պոչով, թևերը կիսաբաց, գլուխը աջ թեքած։ Թռչունի գլխին, սիրամարգի պատկերումներին բնորոշ եռակետ խաչաձև կատարն է, կտուցի մեջ՝ փոքր գնդիկ։ Թռչնապատկերն ամբողջովին ներկալված է քարը եզրագծող բաղմաժապավեն շրջագծի մեջ։

Եթե հայկական մանրանկարչության մեջ սիրամարգերի պատկերումը բավական տարածված երևույթ էր, ապա պատկերաքանդակներում այն հազվադեպ է հանդիպում։ Այդ իսկ պատճառով Թեղենյաց վանքի այդ հոյակերտ զարդաքանդակը կարևոր նշանակություն է ձեռք բերում հայկական պատկերաքանդակների համակողմանի ուսումնասիրության համար։ Նույնը կարելի է ասել ամբողջ բեմի առջևի սալերին կատարված քանդակների վերաբերյալ։

Սիրամարգը որպես խորհրդանիշ տարածված է եղել դեռևս հեթանոսական շրջանում, սակայն առավել իմաստավորվել ու զարգացում է ստացել քրիստոնեական արվեստում (մեծապես ներկայացված է նաև չինական և ճապոնական արվեստի ստեղծագործություններում)։ Հին Հունաստանում սիրամարգը համարվում էր Հերայի թռչունը, որի հրամանով թռչունի պոչի վրայի «աչիկները» (Արգոսի աչքեր) պետք է հետևին Իո լուսնային կովին։ Հին Եգիպտոսում սիրամարգը հանդիսանում էր Հելիոպոլիս քաղաքի խորհրդանշանը (այստեղ էր գտնվում արևի տաճարը)։ Սիրամարգի արևապաշտական էությունը խորհրդանշական է եղել նաև Հնդկաստանի, Հարավ-արևելյան Ասիայի համար։ Տարբեր ավանդական մոտիվներում սիրամարգը հանդիսանում է առատության, բերքատվության և անմահության խորհրդանիշը[6]։

Սիրամարգի խորհրդանշանակությունը տարբեր հեղինակներ տարբեր են մեկնել։ Ըստ Ռավարովի, որը բավական հանգամանորեն անդրադարձել է այդ հարցին, սիրամարգի խորհրդանշումը բխել է նրա մսի աննեխելիության

---

6 Мифы народов мира, Т. 2, М., 1982, с. 273.

պարագայից, այսինքն կապվել է անմահության գաղափարի հետ[7]։ Հեղինակների մի խումբ, չժխտելով վերոհիշյալ մեկնությունը, ավելացնում է, որ սիրամարգի բացված պոչի շրջանաձևությունը հենց ինքը անմահություն է նշանակում[8]։



Աղ. 1

[7] А. С. Уваров. Христианская символика. Ч. I, М., 1908, с. 200.
[8] Նույն տեղում։

Սիրամարգի խորհրդանշական պատկերումները որոշակի տարածում են գտել նաև ռուսական վաղմիջնադարյան պատկերաքանդակներում (Ջերնիգովի Բլագովեշչենյան, Վլադիմիրի Ուսպենսկի և Դիմիտրևյան տաճարներ)[9]։ Դրանց հաճախ ենք հանդիպում բյուզանդական որմնանկարներում ու իրանական մանրանկարներում։

Թե՛ պատկերաքանդակներում և թե՛ մանրանկարչության մեջ սիրամարգերը պատկերվել են բավական միակերպ. հիմնականում բացված կամ (ավելի հազվադեպ) հավաքված պոչով։ Մեծ տարածում են գտել թռչունների հանդիպակաց պատկերները, մեջտեղում կենաց ծառ, երբեմն առանց դրա։ Այս վերջին դեպքի կապակցությամբ, ռուսական միջնադարյան արվեստի հմուտ գիտակ Գ. Կ. Վագները նշում է, որ «հանդիպակաց պատկերված սիրամարգերը, առանց մեջտեղի թասի կամ սուրբ ծառի, ցույց են տալիս, որ անմահության ավանդական գաղափարին զուգընթաց, դրանք ունեցել են նաև աստվածացման ընդհանրապես գաղափար»[10]։

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում հայկական մանրանկարչության մեջ բազմիցս հանդիպող սիրամարգի պատկերումները (հիմնականում խորանազարդերում)։

Այն ձևը և դիրքը, ինչպես քանդակված է Թեղենյաց վանքի սիրամարգը, հազվագյուտ երևույթ է և նմանօրինակ պատկերի առկայությունը հայկական ճարտարապետական կոթողի որմին մեծ նշանակություն է ձեռք բերում ու արժանի է առավել բազմակողմանի և մասնագիտական վերլուծության (սա վերաբերում է նաև ամբողջ քանդակաշարին)։

Սիրամարգի հարթաքանդակում ուշադրություն են գրավում թռչունի կիսաբաց ներքև իջնող թևերը։ Թռչնապատկերների նման հորինվածքային լուծումը մեծ տարածում է գտել հայկական զարգացած միջնադարի քանդակագործության մեջ, մասնավորապես XI—XIII դդ.։

Այս քանդակը մասնավորապես հանդիպում է XI—XIII դդ. վերաբերող որոշ իշխանական տների (Խաղբակյան, Համազասպյան) խորհրդանշաններում, որոնցում հիմնականում ներկայացված է արծիվը (Դսեղում՝ երկգլխանի)՝ մագիլներում խոյ բռնած։ Անշուշտ հանդիպում են նաև թևատարած արծվի քանդակներ (Զվարթնոց, Մակարավանք, Արենի, Առինջ)։

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև խնդրո առարկա ճակատամասի մյուս պատկերաքանդակները։ Քարերից մեկի վրա քանդակված է արև և հավերժություն խորհրդանշող պատկեր. կենտրոնական փոքր վարդյակից տարածվում են կորագիծ ճառագայթները, որոնց ծայրին նույնպես վարդյակներ են քանդակված։ Մյուսի վրա, բազմագիծ ժապավենազարդի մեջ առնված երկու հատվող եռանկյունիների (վեցանկյուն աստղ) մեջտեղում պատկերված է կտուցը թևին իջեցրած թռչունի հարթաքանդակը։ Աստղի անկյուններում՝ արտաքուստ և ներքուստ, քանդակված են վարդյակներ և այլ բուսական զարդաձևեր։ Թռչնապատկերի քանդակման այս ձևը որոշակի տարածում է գտել ճարտարապետական հուշարձանների քանդակազարդման համակարգում։ Նույնը կարելի է ասել վեցանկյուն աստղի զարդաձևերի մասին։ Սակայն հորինվածքային այս լուծումը, որով ներկայացված է տվյալ հարթաքանդակը, նույնպես եզակի է, չնայած նմանատիպ զարդաձև (թռչնի փոխարեն բուսական զարդեր) հանդիպում է նաև Միջին Ասիայի միջնադարյան հուշարձաններում։

Իրենց գեղեցկությամբ և քանդակազարդման նուրբ տեխնիկայով աչքի են ընկնում նաև բեմի ճակատի աջ և ձախ ծայրերի քարերը։ Փոքր քառակուսիների մեջ ներառնված բուսականի և երկրաչափականի զուգորդմամբ զարդաքանդակների գոտին, կենտրոնական հինգ միահյուսված վարդյակներով ուշագրավ հորինվածքային պատկեր է ստեղծում։ Եզրային քառակուսի-

---

9 Г. К. Вагнер. Скульптура Древней Руси XIII в. М., 1969, с. 290.

10 Նույն տեղում։

ների մեջ ներառնված զարդը նույնությամբ կրկնում է Անիի Ս. Գրիգոր եկեղեցու քանդակներում հանդիպող զարդաձևը (XI դար)։

Մի քանի խոսք քանդակաշարի թվագրման մասին։

Սիրամարգի հարթաքանդակում այս կապակցությամբ հատկանշական են թռչունի թևերի բացվածքը, դիրքը և քանդակազարդումը։ Ինչպես նշվեց, այսօրինակ պատկեր (միայն արծվի) հաճախ է հանդիպում XI—XIII դդ.։ Եթե թևերի բացվածքով ու դիրքով մեր սիրամարգը համադրելի աղերսներ ունի այդ արծվաքանդակների հետ, ապա քանդակազարդման տեխնիկայով այն որոշակիորեն առանձնանում է, առավել մերձենալով XIV դարում (առաջին կես) հանդիպող մի քանի թռչնապատկերների, որոնցից հատկապես պետք է նշել Արենիի Ս. Աստվածածին եկեղեցու առագաստների վրա պատկերված Ղուկաս Ավետարանչի խորհրդանշական և Հովհան Ավետարանչի թռչնակերպ հարթաքանդակները, նաև ավելի ուշ (1501 թ.) թվագրվող, Առինջի բերդի տարածքում գտնվող Ստեփանոս նկարչի արծվաքանդակը։ Նշված բոլոր պատկերաքանդակներում (ներառյալ նաև սիրամարգը) աչքի է դարնում քանդակազարդման արտակարգ ճոխությունը և քարի ամբողջ մակերեսը տարբեր կամ նույնաոճ (կրկնվող) պատկերներով հարդարելու ձգտումը, ինչը առավել բնորոշ է XIV (նաև ավելի ուշ) դարի քանդակազարդմանը։ Սրան պետք է ավելացնել նաև քանդակների ոչ խորը, մակերեսային մշակումը։

Եզրափակելով մեր խոսքը Թեղենյաց վանքի Ս. Կաթողիկե եկեղեցու բեմի ճակատամասի զարդաքանդակների մասին, կարելի է նշել, որ դրանք հայկական քանդակագործության եզակի և բարձրարվեստ ստեղծագործություններ են և վկայում են մեր տաղանդաշատ քարգործ վարպետների հմտության ու բարձր ճաշակի մասին։

Ամենայն հավանականությամբ, եկեղեցու բեմի այս ճակատը կառուցվել է շինության հերթական նորոգման ժամանակ՝ XIII դարի վերջին կամ XIV-ի սկզբին։

Հնագիտական գտածոներ. Պեղումների ընթացքում տարբեր խորությունների վրա հայտնաբերվեցին նյութական մշակույթի բազմաթիվ ու բազմապիսի առարկաներ։ Մի շարք իրերի կիսապատրաստուկների և խարամի առկայությունը վկայում է, որ վանքին կից գործել են մետաղագործական և խեցեգործական մի քանի արհեստանոցներ, որոնք բավարարել են, թերևս, ոչ միայն վանքի, այլև շրջակա գյուղերի բնակչության պահանջմունքները։

Մետաղյա առարկաներ. Պատմահնագիտական առանձնակի արժեք է ներկայացնում մետաղյա (երկաթ, պղինձ) առարկաների հավաքածուն, որն աչքի է ընկնում թե՛ իր բազմազանությամբ և թե՛ առատությամբ։ Դրանք կենցաղի իրեր են, արհեստավորի գործիքներ, զենքեր։

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում պեղումներից հայտնաբերված հինգ նետասլաքները։ Դրանցից չորսը երկաթից պատրաստված սովորական նետասլաքներ են, բարակ երկար պոչուկով, կենտրոնում փոքր լայնացումով։ Չնայած արտաքին նկարագրով դրանք իրար չեն կրկնում, այդուհանդերձ վստահորեն կարելի է ասել, որ տեղական ծագում ունեն։ Նմանօրինակ նետասլաքներ հայտնաբերվել են Անիում, Դվինում, Գառնիում։ Այս նետասլաքներն ունեն 10—11 սմ երկարություն, 0,5 սմ հաստություն։

Ուշագրավ է հինգերորդ նետասլաքը (աղ. II, 1)։ Սրա օրինակները Հայաստանում առայժմ սակավ են։ Այս նետասլաքն ունի տերևի ձև, կոթունի վերևում առկա է բլթակը, որը պահել է նետի փայտյա հատվածը։ Նմանօրինակ նետասլաքները հայտնի են մոնղոլ-թաթարական անունով, կապվում են մոնղոլների արշավանքների հետ և բերել են նրանք[11]։ Դրանք լայնորեն հայտնաբերվել են մոնղոլների տիրապետած ընդարձակ տարածքում և թվա-

[11] А. Ф. Медведев. Татаро-монгольские наконечники стрел в Восточной Европе.—СА, 1966, № 2, с. 58.



Նկ. 11

դրվում են XIII դարի երկրորդ կեսով, XIV սկզբով։ Հայաստանում այդպիսի նետասլաքներ հայտնաբերվել են Անիում[12], Գառնիում[13], Դվինում[14]։ Մեր նետասլաքի ընդհանուր երկարությունն է 13 սմ, լայնությունը՝ 3 սմ, կոթունի երկարությունը՝ 5 սմ։

Ինչպես նշում է Ա. Ֆ. Մեդվեդևը, այս չափերն ունեցող նետասլաքներն օգտագործվել են ձիերի և զրահավորված զինվորների վրա արձակելու համար[15]։

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում պեղումներից գտնված փոքր կողպեքը և ավելի մեծ, նույնպես կախովի կողպեքների համար նախատեսված հատուկ զսպանակավոր միջուկները (աղ. II, 2, 3, 5)։ Այս տիպի կողպեքները, ինչպես նշում է ակադ. Բ. Ա. Ռիբակովը, հայտնի են եղել դեռևս հին Չինաստանում, Ճապոնիայում, Հռոմում, Արևելյան և Փոքր Ասիայում։ Տարբեր են եղել միայն կողպեքի իրանի և լծաղեղի (զսպանակավոր կոթունի հետ) արտաքին ձևերը[16]։ Այսպիսի կողպեքներ քանիցս գտնվել են ռուսական միջնադարյան հնավայրերում։

Հայաստանում նման կառուցվածքի կողպեքներ հայտնաբերվել են անհամեմատ քիչ, բացառապես զարգացած միջնադարի հուշարձաններում։

Այս կողպեքների բաղկացուցիչ մասերն են։ իրանը, որն իրենից ներկայացնում է երկու, իրար միացված, տարբեր չափերի գլաններ, լծաղեղ մի ծայրին միացված զսպանակավոր կոթունով և բանալի։ Մեծ գլանն ունի երկու հարթակ։ Վերին հարթակի վրա բացված է ուղղանկյուն անցք լծաղեղի զսպանակավոր կոթունի հորիզոնական կտրվածքի չափով։ Ստորին հարթակի վրա բացված անցքը նախատեսված է բանալու համար։ Փոքր գլանի վերևի մասը բաց է. սրա մեջ մտնում է լծաղեղի մյուս՝ ազատ ծայրը, իսկ ներքևը փակ է։ Կոթունն իրենից ներկայացնում է մետաղյա տափակ ձող, որի ստորին մասում զոդված են վերևում իրարից հեռացող երկու թիթեղիկներ։ Փակելու համար զսպանակավոր կոթունը մտցնում են մեծ գլանի վերին նստուկի անցքի մեջ։ Այն ներս հրելով՝ թիթեղիկներն աստիճանաբար սեղմվում են։ Երբ սեղմված թիթեղիկները լիովին հայտնվում են գլանի մեջ, բացվում են, իրենց ծայրերով դեմ առնելով վերին հարթակի ներսի մակերեսին։

Կողպեքը բացելիս հատուկ կառուցվածքի բանալին մտցնում են մեծ գլանի ստորին հարթակի անցքի մեջ։ Բանալու ծայրին արված երկու հորիզոնական ելուստները աստիճանաբար սեղմում են թիթեղիկները՝ մինչև զսպանակավոր կոթունի դուրս գալը[17]։

Ամենայն հավանականությամբ, նույն սկզբունքով աշխատող կողպեքի մեկ այլ տարբերակ է ներկայացնում վերջերս հայտնաբերված մետաղյա առարկան։ Ռուսական հնագույն կողպեքներից մեկի հետ համադրելով, պարզվեց, որ դա կողպեքի հիմնական իրանն է, որի վրա հորիզոնական ամրացվել է գլանը։ Ակադ. Բ. Ա. Ռիբակովը այս տիպի կողպեքները թվագրում է XII—XIII դդ., չնայած նույն սկզբունքով աշխատող կողպեքներ հանդիպում են

---

12 Հատկանշական ցուցակ թանգարանային ժողովածուների, պր. 2. Անի քաղաքի պեղումներից հայտնաբերված առարկաներ, աշխատասիրությամբ Եվգենյա Մուշեղյանի. Երևան, 1982, էջ 136, № 1427, տախտակ XXXIV, 1։

13 Բ. Ն. Առաքելյան, Գ. Հ. Կարախանյան. Գառնի III, 1949—1956 թթ. պեղումների արդյունքներ. Երևան, 1962, էջ 52, նկ. 9։

14 Կ. Գ. Ղաֆադարյան. Դվին քաղաքը և նրա պեղումները. հ. 1, Երևան, 1952, էջ 161։

15 А. Ф. Медведев. Указ. соч., с. 59.

16 Б. А. Рыбаков. Ремесло Древней Руси. М., 1948, с. 152.

17 Այս կողպեքների մասին, տե՛ս Б. А. Колчин. Черная металлургия и металлообработка в Древней Руси (домонгольский период). МИА, № 32, М., 1953, с. 152—162. Հեղինակը այս կողպեքները թվագրում է X—XIII դդ.։

նաև ավելի վաղ՝ IX—XI դդ.։[18] Թեղենյաց վանքի պեղումներից հայտնաբերված կոռաձքների բաղադրիչ մասերը դժվար է կոնկրետ թվագրել, քանի որ դրանց հետ գտնված առարկաները (խեցեղեն, մետաղ), տարաժամանակյա են։

Մետաղյա առարկաների մեջ առանձնանում է ծալովի դանակը, ուղիղ երկար շեղբով։ Այն ունեցել է փայտից կամ ոսկորից պատյան։ Պատյանի և շեղբի միացման կետի մոտ, ծայրին, ամրացված է փոքր օղակ՝ կախելու համար։ Այսպիսի դանակներ հայտնի են Անիից, Գառնիից։ Հայտնաբերված գործիքների մեջ կարելի է նշել փոքրիկ դուրը, հայտնի նաև Գառնիից, ձիու կամ ավանակի թամբի փոկի օղակը (Գառնի, Անի), երկաթյա քառակուսի ճրագը, որն ամրացվում էր մեծ աշտանակաձև ճրագակալների վրա (Անի), ակիշները՝ խմորի տաշտի կամ թոնրի պատերը խմորի ու հացի մնացորդներից մաքրելու համար, բավական լավ պահպանված մկրատը, վարպետորեն պատրաստված նրբունելին։ Մեծ թիվ են կազմում տարբեր չափերի գամերը, ամրակները, ասեղները, ձիու, եզան, ինչպես նաև մարդու կոշիկի պայտերը։ Պեղումների ժամանակ գտնվել են տարբեր չափի և ձևի դանակներ, կեռեր, կախիչներ (աղ. II, 6—11)։

Մետաղյա առարկաների այսքան բազմազանությունն ու առատությունը հաստատում է վանական տնտեսությունում գործող մետաղագործական արհեստանոցի առկայությունը։ Մետաղյա՝ հիմնականում երկաթից, առարկաների թվագրումը, բացառությամբ մի քանիսի, դժվար է որոշակիացնել, դրանց ձևերն ու պատրաստման եղանակը գոյատևել են բավական երկար ժամանակաշրջան։

Խեցեղեն.—Պեղումների շնորհիվ ի հայտ եկան հասարակ և ջնարակած խեցեղենի բազմաթիվ ու բազմապիսի նմուշների բեկորներ։

Հասարակ խեցեղենը հիմնականում ներկայացված է խոհանոցային անոթների՝ քրեղանների, տարբեր չափերի կճուճների, թասերի, սափորների, կարասների նմուշներով։ Նշված խեցեղենն արտաքուստ ունի սև կամ կարմիր փայլեցված (նաև՝ չփայլեցված, մրապատ) մակերես։ Հանդիպում են շատ նուրբ, բարակ պատերով և հաստ ու կոպիտ մշակմամբ անոթներ։ Արտաքին զարդարումը կատարված է հիմնականում փորագրելու և ներճկելու եղանակով։ Խեցանոթների մեծ մասը պատրաստվել է դուրգի վրա (աղ. III, 1—6, 11—12, 15)։

Մեծ թիվ են կազմում կճուճների ու կարասների խուփերի նմուշները (բեկորային ձևով), կոնաձև կամ փոսիկավոր բռնակներով (աղ. III, 13)։

Ջնարակած խեցեղենի նմուշները բավական սակավ են։ Դրանք հիմնականում թասերի բեկորներ են, որոնց մի մասի հատակները պահպանվել են։ Գտնված բեկորների վրա իշխում են կանաչ, դեղին և սպիտակ գույները, պատված են գլխավորապես երկրաչափական և բուսական զարդաձևերով։

Ջնարակած խեցեղենը թվագրվում է XII —XIV դդ.։

Հնագիտական գտածոների մեջ հետաքրքրություն է ներկայացնում պարսկերեն արձանագրությամբ հախճասալի բեկորը։ Պատրաստման բարձր տեխնիկայով ու գեղարվեստական հարդարմամբ աչքի են ընկնում չորս ծխամորճերը (երեքը կոտրված) (աղ. III, 14)։

Պեղումներից հայտնաբերվել են նաև քարից պատրաստված առարկաներ։ Դրանք հիմնականում թեշիկի գլուխներ են։ Հանդիպում են նաև ավելի մեծ տրամագծով, տափակ, մեջտեղը անցքով նույնանման քարեր, որոնց կիրառական նշանակությունը դժվար է որոշել։

Ոսկրից պատրաստված առարկաներ հայտնաբերվել են ընդամենը երկու հատ. այծի եղջյուրից կտուտիչ (աղ. III, 10) և 20 սմ երկարությամբ գլան։

Վանական տնտեսությունում օգտագործվել են նաև ապակյա անոթներ։ Չնայած դրանց գտածոները շատ փոքր թիվ են կազմում, սակայն աչքի են ընկնում ապակեգործի շատ նուրբ ու կատարյալ աշխատանքով։ Հայտնա-

[18] Б. А. Рыбаков. Указ. соч., с. 221.

բերվել են ապակյա անոթների 5—6 բեկորներ, որոնք հիմնականում բաժակների նստուկներ են։ Հատկապես նշելի են երկու շրջանաձև հենակով, բարձր ու բարակ ոտքով գավաթները (պահպանվել են հենակը և շուրթերի բեկոր-



Աղ. III

ները)։ Ապակյա անոթները կարելի է թվադրել XI—XII դդ. (աղ. II, 12, 13)։

Պեղումների ընթացքում հայտնաբերվեց երեք դրամ՝ ելտկուզյան դրամ պղնձից, թողարկված աթաբեկ Մուզաֆար ադ-դին Կիզիլ Արսլանի (1187—

1197 թթ.) կողմից[19], հայտնի է նաև Դվինից և այլուստ. հուլաղուլյան արծաթե դիրհեմ, թողարկված Արղուն խանի (1284—1291 թթ.) անունով. երրորդ դրամը պղնձից է, շատ վատ է պահպանված, ենթադրաբար կարելի է նույնացնել ելտկուզյան դրամների հետ։

Նորաճայտ վիմագիր արձանագրություններ. Մինչև պեղումները հայտնի էին Թեղենյաց վանքի ճարտարապետական հուշարձանների, խաչքարերի և տապանաքարերի վրա փորագրված բազմաթիվ արձանագրություններ, որոնցից մի քանիսը արդեն դարձել են ուսումնասիրության առարկա, իսկ մյուսները կհրապարակվեն «Դիվան հայ վիմագրության» համապատասխան պրակում։ Հոդվածում ներկայացնում ենք միայն պեղումների շնորհիվ հայտնաբերված արձանագրությունները։ Ցավոք, արձանագրություններն ամբողջական չեն, իսկ մի քանիսն էլ ունեն հողմնահարված հատվածներ։

1 Արձանագրված քար, դրված գավթի արևմտյան պատի վրա, 5 տող.

...ԱՐԱՅԻՆ, ԵՍ /...Ո ՄԻԱԲԱՆԵՑԱ ԹԵՂ/ ՐԵՆԵԱՅ ՍԲ ՈՒԽՏԻՍ
ԵՒ ՏՎԻ ՁԻՄ ԳՆԱԾ ԳՈՌՁ /...ՇՏԱԿԱ ՓԱՍԻՆ ՀՈՂՆ ՈՐ Ի Ն/...։

2 Արձանագրված քար, ընկած գավթի մեջ, 4 տող.

...ԵՍ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ /ՐԻՍ ՅՈՎՀԱՆԷՍ ԵՒ ԱՄՈՒՐՍԻՆ ԻՄ.../
...ՐՄԻԱԲԱՆԵՑԱՔ ՍԲ ՈՒԽՏԻՍ ԵՒ ՍՊԱՍԱՒՈՐՔՍ ԵՏՈՒՆ.../
...ԺԱՄ ԻՆՁ Կ...։

ՄԱՆՈԹ. Հավանաբար առաջին տողը վերաբերում է այլ արձանագրության, տառաձևերը նույնն են։

3 Արձանագրված քար, ընկած գավթի մեջ, 4 տող.

...ՐՈՒԽՏՍ ԵՒ Ս/ՐՊԱՍԱՒՈՐՔՍ... ԱԾԱԾՆԻՆ' ...ՐՍՊԱՍՀԱՒՈՐՔՍ
ԵՏՈՒՆ Ի ՏԱՐԻՆ/...ՅԱՅ ։Ա։ ԻՆՁ ԵՒ...։

ՄԱՆՈԹ. Այստեղ նույնպես գործ ունենք երկու արձանագրության հետ։

4 Արձանագրված քար, ընկած գավթի մեջ, 5 տող.

...ՄՍՆ ԱՒ... /...ՏԱՒՆԻ ՎԱՐԴ...ՌՆ... /...ՐՄԵՂՈՒՑԵ/ԱՅ
.../...'ՍՊԱՍԱՒՈՐՔՍ ԽՈՍՏԱՅԱՐՆ.../ ...ՄԱՄՔԱ/ՆԱ...։

ՄԱՆՈԹ. Առաջին երկու տողը գրված են այլ տառաձևերով, ինչը վկայում է երկու տարբեր արձանագրությունների առկայության մասին։ Մամքան անձնանունը հիշատակված է ևս մի քանի վկայագրերում։

5 Արձանագրված քար, ընկած գավթի մեջ, 5 տող.

ՇՆՈՐՀԻՒՆ ԱՅ, ԵՐՍ ...../...ՐՍՊԱՍՀԱՒՈՐՔՍ ԽՈՍՏԱՅՐԱՆ.../...
ԵՍ, ՈՒԼՈՊԷԿՍ ՏՐՈՒՒ.../...։Բ։ ԺԱՄ Ի ՏԱՒՆԻ ԱՆՏՈՆՐԻ.../
... ։Ա։ ՄԱՄՔԱՆԱՅ։

6 Արձանագրված քար, ընկած գավթի մեջ, 2 տող.

...ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ ։Բ։ ԱՐԻՐ ԺԱՄ... /...ՐԿՀԱՏԱՐԻՑՔՆ Ա/ԻՐՀՀՆ-
/ԻՆ/...

7 Արձանագրված քար, ընկած գավթի մեջ, 4 տող.

/...ՐԽՀԱՉ/... ԱՅՆ /...ՐԱԻՐՀՆԻՀՆ ՅԱՅ։

Ծանոթ. Արձանագրությունը փորագրված է բավական մեծ քարի վրա, խոշոր տառերով, որոնք իրենց ձևով խիստ նման են մատենադարան-Նշխարատան միջից գտնված վկայագրի տառերին։

8 Արձանագրված քար, դրված գավթի հարավային պատի վրա, 5 տող.

ՈՂՈՐՄՈՒՐԹԵ/ԱՄ/ԲՆ ՐԱՅ... Է ՄԻԱՅԲԱՆԵՑԱՅ ՐՍԲ ՈՒԽՏԻՍ ԵՒ
ՍՊԱՍԱՒՈՐՔՍ ՀԱՐՍՏԱՏԵՑԻՆ Ի ՏԱՐԻՆ ։Բ։ ԺԱՄ Ի ՏՐԱՒՆԻՆ
ՔԱՌՀԱՍՆԻՑՆ, ԿՐԱՏԱՐԻՑՔՆ ԱԻՐՀՀՆԻՆ ՅԱՅ։

Ծանոթ. Տողանջատումները չենք նշել, քանի որ արձանագրությունը երկու կողմից էլ պակասավոր է։

9 Արձանագրված քար, դրված գավթի հարավային պատի վրա, 6 տող.

---

19 Խ. Ա. Մուշեղյան. Դրամական շրջանառությունը Հայաստանում (մ. թ. ա. V—մ. թ. XIV դարեր). Երևան, 1983, էջ 316, № 192։

..ՐԺԱՐՄ ։Ա։ ԻՆՁ ։Ա։ Ն ՏԱԻՆԻՆ ...ԲԵՂՍ ՄԽԻԹԱՐ ՐՄԻԱԲԱՆԵՑԱ
ՍԻ։ ՈԻԽՂՏԻՍ ՍԻ ԵՏՈՒ ...ՐՍՊԱՍԱՒՈՐՂՔՍ ԽՈՍՏԱՑԱՆ...
Ն Ի ՍՐԲՈՑՆ...։

Ծանոթ. Այստեղ առկա է երկու արձանագրություն։ Տողանջատումները չեն նշված նույն պատճառով։

10 Արձանագրված քար, ագուցված գավթի հյուսիսային պատի մեջ, արևելյան և անկյունային որմնասյուների միջնամասում, 5 տող.

ՐՎԱՐԴԱՅՊԵՏԱ ՏՎԱՆ ....ՐՄԻՂԱԲԱՆՔՍ ՀԱՍՐՏԱՏԵՑԻՆՂ...։
...ՄԻԱԲԱՆՔՍ ՐԵՏՈՒՆ Ի ՏՂԱՐՈՑՆ ։Գ։ ՊԱՐՏԱՐԱԳ ...ԵՏԵՑ ԱԾԱԾ...

Ծանոթ. Քարի ամբողջ մակերեսը կոտրտված է։

11 Արձանագրված քար, նախորդի կողքին, 6 տող.

...ՐՏԱՐՂՈՑՆ ։Բ։ ԱԻՐ ԺԱՄ Ի ՐՏԱԻՆՂԻՆ ՅՈՎՀԱՆՈՒ ...ՈՂՈՐՄՈՒԹ/ԵԱՄ ։Բ ԱՅ, ԵՍ ... ՄԻԱՅԲԱՆԵՑԱՅ ՍԲ ՈՒԽ[ՏԻՍ ԵՒ ԵՏՈՒ ԱՐԴ[ԻՒՆՍ ԵՒ ՍՊԱՍԱՒՈՐՐՔՍ ԿԱՐԴԵՑԻՆ Ի ՏՂԱՐԻՆ ։Գ։ ՊԱՏԱՐԱԳ Ի ՐՏԱԻՆԻՆ ...։

Ծանոթ. Այստեղ նույնպես առկա է երկու արձանագրություն։

12 Արձանագրված քար, ընկած գավթի հատակին, հատված.

...ԿԱՐԴԵՑԻՆ ։Բ։ ԱԻՐ ՐԺԱՄ .. ՐԿԱՏԱՐԻՂՔՆ ԱՐԻՐՂՀՆԻՆ ՅԱՅ։

13 Արձանագրված քար, հայտնաբերվել է գավթին հյուսիսից հարող շինության մեջ, 4 տող.

ՋՋԱՐ ԲԻՒՆՈ... /ՈՐ ԱՌ ՔՍ Ի ԲԱՋՐՈՒՄ... /ԹԵՂԵՆԵԱՅ ՋԳԵՂՆ...
/Ս ԱՅԳԵԱՅՅՆ ՈՒՐ...։

Ծանոթ. Այս նույն տառաձևերով արձանագրության բեկոր հայտնաբերվեց գավթի մարման ժամանակ։

14 Խաչքարի արձանագրված պատվանդան, ընկած համակառույցից մոտ մեկ կմ հարավ, սարալանջի ոչ մեծ բացատում, 4 տող.

ԱՅՍ ՆՇԱՆ ՏՆ ՅԻ/ԽԱՋԵԱԼ ԱՐՔԱԻՆ ԿԱՆ/ԿՆԵԱԼ Ի ԲԱՐԷԽԱԻՍՈՒԹԻ/
ՅԱԿՈԲՈՍ ՎԴԻՆ։

Ծանոթ. Հովհաննավանքի կաթողիկե եկեղեցու արևմտյան մուտքի ճակատի կամարակալի վրա փորագրված արձանագրության մեջ եկեղեցու շինարարությանն օժանդակող անձանց թվում հիշված է վանքի առաջնորդ, այդ եկեղեցին շինող Աստվածատուր վարդապետի ՈՐԴԻԱՅԵԱԼ Հակոբոս վարդապետը (1221 թ.)[20]։ Անձնանունների նույնությունը և աշխարհագրական միջավայրի մոտիկությունը հնարավորություն են տալիս նույնացման աղերսներ տեսնել Հովհաննավանքի ու Թեղենիսի համանուն վարդապետների միջև։

15 Խաչքար պատվանդանի արձանագրված քար, ընկած գավթին հյուսիսից հարող կառույցի հատակին, 4 տող.

Ի ԹՎԻՆ ։ՉԽ։ (1291), ԵՍ՝ ՄԽԻԹԱՐԻՉՍ, ԿԱՆ/ԳՆԵՑԻ ՁԽԱՉՍ ՅԻՇԱՏԱԿ ԻՆՁ ԵՒ ԾՆ/ՈՂԱՅ ԻՄՈՅ։ ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ ԿԵ/ՆԱՅ ՏՈՒՈՂԻՍ
ԹՈՂՈՒԹԻ Մ։

16 Մուտքի բարավորի քար, հայտնաբերված փոքր եկեղեցու մեջ, 4 տող.

ՏՐ ԱՌ ՈՂՈՐՄԵԱ /ՀԱՋԱՐԴԵՂԻՆ ԵՒ Ծ/ՆՈՂԱՅ ԻՒՐՈՅ, ՈՐՈՅ/
ՍԲ ՆՇԱՆՔՍ ԵՆ։

ԾԱՆՈԹ. Քարի մակերեսին քանդակված են մի քանի ռելիեֆ խաչանշաններ։

Ձենք բացառում, որ Հազարդեղը մասնակից եղած լինի եկեղեցու նորոգչական աշխատանքներին։

Թեղենյաց վանքի պեղումներից դեռևս մեծ սպասելիքներ կան և հետագա ուսումնասիրությունները էլ ավելի կհարստացնեն մեր իմացությունները այս հոյակերտ կրոնամշակութային օջախի ճարտարապետության ու գործունեության մասին։

---

20 Կ. Գ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն. Հովհաննավանքը և նրա արձանագրությունները. Երևան, 1948, էջ 94, արձ. 34։

РАСКОПКИ МОНАСТЫРЯ ТЕГЕНЯЦ

(Результаты 1979—1989 гг.)

Г. Г. САРКИСЯН

Резюме

Благодаря раскопкам 1979—1989 гг. в монастыре Тегеняц были раскрыты четыре сооружения: кафедральная церковь, библиотека, сооружение типа притвора, маленькая церковь. Библиотека представляет собой прямоугольную галерею со сводчатым перекрытием. Изнутри она была разделена на три части. В юго-западной стороне прямоугольное помещение, в восточной—три кельи с полукруглыми апсидами, в центре коридор. Строительство осуществлялось в два этапа. Вначале был прямоугольный зал. Внутренние деления были произведены впоследствии (XII—XIII вв.). Кафедральный собор представляет собой купольный зал с выдвинутыми профилированными пилонами (XI в.). Облицован гладкотесаным туфом. В декоре церкви особый интерес и ценность представляет фронтальная стена алтаря. Она состоит из шести роскошных прямоугольных и квадратных орнаментов, вырезанных на камне. Привлекает внимание изображение павлина. Этот скульптурный декор датируется концом XIII или XIV вв. На северной стороне открылось квадратное сооружение с четырьмя колоннами в центре, схожее с притвором (вторая половина XIII в.). Позднее этот зал приобрел хозяйственное значение. Малая церковь представляет собой снаружи восьмигранное, изнутри четырехапсидное сооружение с прямоугольной галереей с западной стороны. Плановой композицией эта церковь напоминает аналогичные композиции VI—VII вв.. Очевидно, она являлась кладбищенской церковью или часовней. В период раскопок были обнаружены черенки простой и расписной керамики. Большое число составляют металлические предметы. Примечательны изделия из кости, камня, стекла. Обнаружено также множество надписей.